լուծելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի շրջանակներում, իսկ Պատվիրատուն պարտավորվել է վճարել մատուցվելիք ծառայությունների համար: Պայմանագրի գինը կազմել է 200,000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Հաշվի առնելով գործի բարդությունը և փաստաբանի կողմից կատարված աշխատանքի ծավալը՝ Դատարանը գտնում է, որ 200,000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամը պետք է համարել փաստաբանի վարձատրության խելամիտ չափ, հետևաբար՝ այն ենթակա է բռնագանձման Պատասխանողից հօգուտ Հայցվորի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1/. «Սոնիկ Երիցյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ 21.12.2022 թվականին կնքված թիվ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/93-Ք-3 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին՝ 03.05.2023 թվականին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները» բաժնում հրապարակված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

21.12.2022 թվականին կնքված թիվ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/93-Ք-3 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին՝ 03.05.2023 թվականին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները» բաժնում հրապարակված որոշումը ճանաչել անվավեր:

2/. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից հօգուտ «Սոնիկ Երիցյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ բռնագանձել 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի մասով Հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

3/. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից հօգուտ «Սոնիկ Երիցյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ բռնագանձել 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության մասով Հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

4/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան